ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ · ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱԼՊԵՐ ԲՈՅԱՃՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԱԼՊԷՌ ՊՈՅԱՃԵԱՆ, ՈՐ Ի ԹԱՐՋԱՆԱ, ԱՄՆ

Մեծարգո պրն Պոյաճեան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սիրով ողջունում եւ Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ:

Տակաւին Արարատեան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդութեան տարիներից ճանաչում ենք Ձեզ եւ քաջածանօթ ենք Ձեր եռանդուն ու անխոնջ գործունէութեանը՝ յանուն հայ ժողովրդի բարօրութեան եւ Հայոց պետականութեան բարգաւաճման: Երկար տարիներ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան գործունէութեան ոլորտից ներս գովելի ծառայութիւնը բարի անուն ու համբաւ է բերել Ձեզ, քանզի Դուք մեր ժողովրդի առաջընթացի ու պայծառ ապագայի տեսլականով Ձեր ջանքերն ու կարողութիւններն էք ներդնում Միութեան բացառիկ առաքելութիւնը հայոց կեանքում արդիւնաւետութեամբ իրականացնելու համար: Հայաստանի եւ Արցախի անկախացումից ի վեր Դուք գործուն մասնակցութիւն էք բերում մեր Մայր Հայրենիքին եւ Արցախ աշխարհին զօրակցելու ծրագրերին՝ աստուածահաճոյ բարերարութիւններով սատար լինելով հայրենակերտումի նուիրական առաքելութեանը:

Մեծապէս գնահատելի է, որ Դուք ազնիւ նուիրաբերութեամբ աջակցում էք նաեւ ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի Առաջնորդարանի Մայր Տաճարի կառուցմանը, որն իրապէս նոր աշխուժութիւն պիտի բերի թեմի ազգային-եկեղեցական կեանքում: Ձեր բոլոր բարի ձեռնարկումներին Դուք յաւելեցիք Ձեր սրտաբուխ իշխանական նուիրատուութիւնը Մայր Աթոռի ծրագրերի իրագործմանն ի խնդիր՝ որպէս նոր վկայութիւն եկեղեցաշինութեան եւ

ազգաշինութեան գործում մաս եւ բաժին ունենալու Ձեր պատրաստակամութեան ու նախանձախնդրութեան:

Յարգարժան պրն Պոյաճեան, բարձր գնահատելով Ձեր ազնիւ ծառայութիւնները Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, ինչպէս նաեւ ընդառաջելով ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով հայցում ենք Տիրոջ ամենառատ շնորհները Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ մաղթելով կենաց քաջառողջութիւն, ամենայն բարիք եւ գործոց յաջողութիւններ:

Մեր աղօթքն է նաեւ, որ Բարձրեալ Տէրը զօրացնի համայն մեր ժողովրդի հայրենանուիրումի ոգին՝ Իր հանապազ հովանու ներքոյ միշտ առաջնորդելով մեծարժան գործերի:

*Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**Տուաւ Կոնդակս ի 28-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2005 եւ ի թուին հայոց ՌՆԾԴ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 317**